

ԲԱՅ ՆԱՄԱԿ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Posted on October 2, 2011 by Keghart



Category: [Opinions](#)



Վեհափառ Տեր,

Հայաստանում և արտերկրում բնակվող հայությունը բազմաթիվ անգամներ ունկնդրելով Ձեզ, համոզվել է Ձեր խոսքի անկեղծության, Ձեր արժանապատիվ կեցվածքի, հայ մարդուն խոսքով և գործով անշահախնդիր օգնության ձեռք մեկնելու Ձեր պատրաստակամության մեջ:

Այս կամակով հայցում ենք Ձեր ուշադրությունը աղաղակող մի անարդարության հանդեպ, որի մասին պարբերաբար լուսաբանում են թե Հայաստանի և թե արտերկրի զանգվածային լրատվամիջոցները, այդ խնդրով հանդես են գալիս անհատ քաղաքացիներ, հասարակական և ազգային կազմակերպություններ:

Վեհափառ Տեր,

Հայաստանում և արտերկրում բնակվող հայությունը բազմաթիվ անգամներ ունկնդրելով Ձեզ, համոզվել է Ձեր խոսքի անկեղծության, Ձեր արժանապատիվ կեցվածքի, հայ մարդուն խոսքով և գործով անշահախնդիր օգնության ձեռք մեկնելու Ձեր պատրաստակամության մեջ:

Այս կամակով հայցում ենք Ձեր ուշադրությունը աղաղակող մի անարդարության հանդեպ, որի մասին պարբերաբար լուսաբանում են թե Հայաստանի և թե արտերկրի զանգվածային լրատվամիջոցները, այդ խնդրով հանդես են գալիս անհատ քաղաքացիներ, հասարակական և ազգային կազմակերպություններ:

Խնդիրը վերաբերվում է Լիբանանի քաղաքացի, 1990 թվականից առ այսօր իր ընտանիքի հետ Հայաստանում բնակվող, Արցախի ազատագրական պատերազմի մասնակից, Շուշիի առանձնակի գումարտակի հրամանատար, “Մարտական խաչ” 1-ին աստիճանի շքանշանի ասպետ, փոխգնդապետ Ժիրայր Սիմոնի Սեֆիյանին ՀՀ քաղաքացիություն շնորհելուն ՀՀ իշխանությունների կողմնակալ կեցվածքին, որի հետևանքով 2004թ., 2006թ. և 2008թ. Ժիրայր Սեֆիյանի դիմումները ՀՀ քաղաքացիություն ստանալու համար իշխանությունների կողմից հանիրավի մերժվել են:

Իշխանությունները անտեսել և մերժել են Երևանի 20 պատվավոր քաղաքացիների, հանրաճանաչ հայ անհատների, հազարավոր քաղաքացիների դիմումները Ժիրայր Սեֆիյանին ՀՀ քաղաքացիություն շնորհելու խնդրում:

Մերժելով հայրենիքի քաղաքացի դառնալու նրա դիմումները ՀՀ իշխանությունը խարխիլում և կասկածի տակ է դնում ազգային միասնությունը՝ այն հիմնարար գաղափարը, որը միավորում է աշխարհասփյուռ հայությանը անկախ քաղաքական,

Կուսակցական և կրոնական պատկանելիությունից:

Աշխարհասփյուռ հայությանը միավորող գաղափարը կարմիր թելի նման անցնում էր Սփյուռք-Հայաստան 4-րդ համաժողովում արտասանած Ձեր ելույթի չորս հիմնավոր հարցերում: Այդ դեպքում ինչ արժեք ունի Սփյուռքի Նախարարի «Արի տուն» ձևական ծրագիրը, երբ արդեն տուն եկած, հայրենի եզերք, հող ու հայրենիք պաշտպանած հայորդուն ապաստան ու քաղաքացիություն չեն տալիս հայրենիքում: Այս հարցը արդեն դադարել է սոսկ ժիրայրի անձնական հարց դիտվելուց և սա արդեն իսկ քաղաքականություն է, տեսակի մերժում:

Օրենքով քաղաքացիություն շնորհելը ՀՀ Նախագահի մենաշնորհն է, բայց նաև մեր բոլորի արժանապատվության հարցն է, որի հետևանքով այս տեսակին փորձում են օտարել իր Հայրենիքից:

Ձեզ, որպես համայն հայությանը միավորող գաղափարը խորհրդանշող Վեհափառ Տեր, ինդրում ենք օգտագործել Ձեր զորավոր և հեղինակավոր խոսքը և միջամտել այս գործի արդարացի լուծման հարցում:

Չարուհի Սարգսի Մուրադյան – նկարչուհի, ՀՀ նկարիչների միության անդամ
Հրանուշ Խառատյան – ազգագրագետ

Սոնա Արշունեցի – գրող հրապարակախոս, հայ դատի պաշտպան: Բրյուսել

Երվանդ Մանարյան – թատերական գործիչ

02.10.2011թ. Երևան

